

ՆԻՒԹԵՐՈՒ ՑԱՆԿ — INHALTSVERZEICHNIS


ԺԶ. ՏԱՐԻ — LVI. JAHRGANG

1942

(ԱՍՏԵՂԱՆԻՇՆԵՐԸ [*] ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՆ)

- Գասապեան Ն.՝ *Յուզակ հայերէն ձեռագրաց ի Բուլղարիա* 70—83, 239—256:
- Էսապալեան Դկտ. Հ. Պ., *Երկինք* 198—202:
- — *Պահլավերէն Սաղմոսարանը* 61—69:
- Ինգլիզեան Դկտ. Հ. Վ., *Հայաստան սուրբ Գրքի մէջ* 1—9, 137—149:
- Ոսկեան Դկտ. Հ. Հ., *Անձեւացեաց, Բողոսնիքի, Երուանդունիքի եւ Աղբակի վանքերը* 161—198:
- — *Գողթնի վանքերը* 23—61:
- — *Մաղարդայ Նախավկայի վանքին կոնգրակները* 83—128:
- — *Սարգիկէի Ժողովքի հայերէն կանոնները* 203—240:
- Տաշեան Հ. Յ., *Հին Հայաստանի արեւմտեան սամհանը՝ Փոքր Հայք եւ Կողովինէ (Սեբաստիա)* 9—22, 149—161:
- * *Արքեպիսկոպոսական Օճման Հանդէս Ամենապատիւ եւ Գերապայծառ Տ. եւ Հ. Մեսրոպ Վ. Հապոզեանի, Ընդհանրական Արքայի Միթիարեանց ի վիեննա* 129—136:
- Gassabian N.: Katalog der armenischen Handschriften in Bulgarien 70—83, 239—256.
- Essabalian Dr. P. P.: Armen. „Erkink“ 198—202.
- — Armenisch-persische Lehnwörter im Pehlevi-Psalter 61—69.
- Inglisian Dr. P. V.: Armenien in der Bibel 1—9, 137—149.
- Oskian Dr. P. H.: Die Klöster in Anjewacik, Bodownik, Erowandownik und Albak 161—198.
- — Die Klöster in Golt'n 23—61.
- — Die Patriarchalschreiben zugunsten des Klosters des Protomartyrs Malard 83—128.
- — Die altarmenische Übersetzung der Kanones von Sardika: Text und Untersuchung 203—240.
- Dashian P. J.: Die westliche Grenze des alten Armenien: Armenia Minor und Colophene (Sebasteia) 9—22, 149—161.
- * Die Feier der Weihe zum Erzbischof Sr. Exzellenz Mgr. Mesrop Habozian, Generalabt der Mechitharisten-Kongregation in Wien 129—136.

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՕԺՄԱՆ ՀԱՆԴԷՍ
ԱՍԵՆԱՊԱՏԻԻ ԵՒ ԳԵՐԱՊԱՅԺԱՐ
Տ. ԵՒ Հ. ՄԵՍՐՈՊ Վ. ՀԱՊՈԶԵԱՆԻ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՐՔԱՅԻ ՄԻԹԱՐԵԱՆՑ Ի ՎԻԵՆՆԱ



Տարւոյս 13 Սեպտեմբեր բուականը վիեննայի Միթիարեան Միաբանութեան Տարեգրքին մէջ օր մը չէ՛ ամբողջ պատմութիւն մըն է բազմապատիկ ու բազմատեսակ բաղձանքներու եւ իղձերու ձոյլ իրականացման: Այդ յիշատակելի բուականին Միթիարեան Միաբանութիւնը ունեցաւ հոգեկան մեծագոյն հրնուանքը տեսնելու իւր Առաջնորդն ու Գլուխը՝ Ամենապատիւ Գերպ. Հ. Մեսրոպ Վ. Հապոզեան Բարձրեալի հորանին առաջ Եպիսկոպոսներու կարգին մէջ իբր նորոժեալ Արքեպիսկոպոս տիտղոսաւոր կամախու:

Սուրբ Գահին կողմէ այս նոր շնորհը անձնական գնահատումի մեծագոյն ու քանձրացեալ արտայայտութիւնն էր, գնահատումին, որուն համաչափօրէն արժանի էր ընտրեալն իւր արբայութեան այս տասնեակ տարուան գործունէութեամբ:

Վերագնահատումի սլացիկ ակնարկով կենդանացնենք վայրկեան մը այն գեղեցիկ ու բեղուն շրջանը, որուն այսօր պսակման գագաթնակէտը կը գտնուինք: 1931 Յունուար 20 ձմեռնային պաղօրերէն էր, երբ Գերայ. Հ. Գրիգոր Գովրիկեան Արքեպիսկոպոսը, տիտղոսաւոր Մծբնայ, 22ամեայ երկար ու ծանր վարչութենէ ետք — մեծպատերազմեան սարսափներուն մէջէն վարած էր իր սիրական Հաստատութիւնը — կը մեկնէր մեզմէ անդարձ: Նոյն տարին Յուլիս 9ին Ուխտիս Արբայութեան ծանր պաշտօնին կը կոչուէր Գերայ. Հ. Մեսրոպ Վ. Հապոգեան Վանական ընդհանուր ժողովով: Այդ ընտրութիւնը արտայայտութիւն էր այն սիրոյն ու գնահատանքին, որուն առարկան էր Նորընտիր Արքեպիսկոպոսը իւր միաբանակիցներու շրջանակին մէջ: Բոլոր գինքը անչցողները նոյն օրը գերագոյն բերկրանքը ապրեցան, վասն զի այդ ընտրութեամբ նախախնամութեան կողմէ վաւերացուած գտան իրենց Միաբանութեանս հանդէպ տածած զգածումներուն եւ իդձերուն ամբողջութիւնը: Փորձառու եւ հմուտ Արքեպիսկոպոսը կու տար փաստերը թէ պիտի իրականցնէր ամէն ակնկալութիւն: Չեռնարկութիւններու եւ յաջողութիւններու շարք մըն են Նորօծեալի վարչութեան նախորդ տարիները: Անոր գործունէութիւնը մշակութային-դաստիարակչական ասպարէզի վրայ զարմանալի արագութեամբ պտղաբերեց. Գահիրէ եւ Բէյրութ բացուեցան գոյգ վարժարաններ. Պլովդիւի վարժարանը ստացաւ սեպհական շէնք: Միաբանութեանս միւս կայեանները օժտուեցան տնտեսական հաստատուն կառուաններով: Կրթական եւ գիտական գետնի վրայ նոր գարկ մը ստացաւ Միաբանութեանս գործունէութիւնը. այդ արդիւնքն էր իւր նորընտիր եռանդուն Արքեպիսկոպոսը, բուն հետաքրքրութեան եւ անձնական ու խոր տեսողութեան, բուն հետաքրքրութեան եւ անձնական հրապոյրին: Ան իւր բոլոր ուժերը ի սպաս դրաւ իւր գաղափարամակարդակը: Այդ նպատակով իւր բազմապատիկ զբաղումներուն վրայ յանձն առած էր նաեւ բարձրագոյն դասեր աւանդել Միաբանութեանս կղերանոցին մէջ, որ իրեն մասնաւոր խնամքին առարկան է: Այն լայն յաջողութիւնը, որ ընկերացաւ միշտ մեր նորընտիր Արքեպիսկոպոսը ամէն ձեռնարկին՝ նշան էր թէ Աստուծոյ ձեռքը կար իւր օրհնութեամբ անոր ամէն գործերուն ու ծրագիրներուն մէջ: Այսօր աւելի քան երբեք կը զգանք այդ Չեռնարկին հովանաւորութիւնը իւր երկաթէ սրունքներուն վրայ յամրօրէն կը յառաջանայ իր ետին թողած՝ կմախսացած դաշտեր, քաղաքներ՝ աւեր աւերակ, — կարծես նոր պատմութիւնը աւեր միայն ըլլար: Այս տեսարանին առաջ Միաբանութիւնս աղօթքի պաշտամունքով կ'ուղղէ իւր

մրմունջները դէպի Բարձրեալը, մրմունջներ, որոնք երախտագիտութեան խունկն ունին այն խնամակալ Չեռնարկին հանդէպ՝ փոխան անթիւ անհամար շնորհներուն, որոնց մեծագոյնն էր նորօծեալ Առաջնորդիս արբայընտրութիւնը:

Արքեպիսկոպոսը նոր վաստակներուն գնահատման մէջ մենք չէինք սխալած եւ ի՞նչպէս սխալէինք, երբ անոնք թիւով ու քանակով շատ ու բազմապիսի էին: Մեր գնահատումը ստացաւ իւր վաւերացումը բարձրագոյն եկեղեցական վայրէն՝ 9 Մայիս 1942 կոնդակով, որով Միաբանութեանս Արքեպիսկոպոսը Գերայ. Հ. Մ. Վ. Հապոգեան տիտղոսաւոր Արքեպիսկոպոս կամախօր կը հռչակուէր: Սուրբ Գահը այս նոր պատուաշնորհը կը հիմնէր վեր հանելով նորընտիր Արքեպիսկոպոսին արժանիքները Միաբանութեանս զարգացման եւ կրօնի ծաւալման ի նպաստ: Յունիս 4ին կը հրատարակուէր պաշտօնապէս նոր Արքեպիսկոպոսին անունումը Հռոմայ մէջ:

Եթէ հարկ եղաւ երկար սպասել մինչեւ օծումը՝ այդ պայմանաւորուած էր ներկայ քաղաքական հանգամանքներէ եւ Ս. Գահին, ինչպէս նաեւ նորընտիր Արքեպիսկոպոսին եւ Միաբանութեանս ջերմ բաղձանքէն: Ամէնուն ջերմօրէն բաղձանքն էր, որ օծումը կատարուէր հայ ծէտով. եւ այդ նպատակով սպասեցինք՝ ակնկալելով որ Արտասահմանէն պիտի գար հայ եպիսկոպոս մը՝ Գերայ. Սարգիս Արք. Տէր Արքեպիսկոպոս, բայց պատերազմի պայմանները անկարելի ըրին մեր բաղձանքին իրականացումը: Ասոր փոխան հանդիսաւոր օծումը կատարեց քաղաքիս Ծիրանաւորը Dr. Theodor Innitzer առնթրակայութեամբ Dr. Franz Kamprath եւ Dr. Ernst Seydl եպիսկոպոսներու:

Սեպտ. 13 տօն էր Միաբանութեանս եկեղեցւոյն համար մասնաւորապէս, որ ծաղիկներու եւ բոյրերու մէջ կը շողար: Նախն մէջ տեղ գրաւած էին եկեղեցական ներկայացուցիչները, տեղույս հայ գաղութը, Միաբանութեանս բարեկամները: Եկեղեցւոյ երգչախումբը, ղեկավարութեամբ Հ. Մովսէս Վ. Սրապեանի, ընկերակցութեամբ նուագախումբի՝ կրօնական-գեղարուեստական հմայքը տուին օժման արարողութեան գեղեցիկ ժամերուն, որոնք նուագով ու լոյսերով՝ անժամանակ ապրումներու վերածուեցան հոգիներու մէջ: Նորօծեալ Արքեպիսկոպոսը իւր անդրանիկ օրհնութեամբ փակեց արարողութիւնը:

Հանդիսադիրները թափօրով եկեղեցւոյ գլխաւոր մուտքէն Մայր Վանք առաջնորդեցին նորօծեալ Արքեպիսկոպոսը, ուր արարողութեան մասնակից ժողովուրդը փութաց իւր շնորհաւորութիւնները յայտնել: Երեկոյեան ժամերն յատկացուած էին Հայ Գաղութին, որուն անունով արժանապատիւ Տէր Եղիշէ Իւթիւնեան, տեղույս Հովիւր, իւր շնորհաւորական ուղերձն ըրաւ վեր հանելով օրուան նշանակութիւնը: Խօսք առին Պր. Գեղամ Ամահանելով օրուան նշանակութիւնը: Խօսք առին Պր. Գեղամ Ամատունի եւ Պր. Արաաշէս Յարութիւնեան, եւ առիթ առնելով օրն ու

Սուրբ Գահին կողմէ այս նոր շնորհը անձնական գնահատումի մեծագոյն ու թանձրացեալ արտայայտութիւնն էր, գնահատումին, որուն համաչափօրէն արժանի էր Ընտրեալն իւր աբբայութեան այս տասնեակ տարուան գործունէութեամբ:

Վերագնահատումի սլացիկ ակնարկով կենդանացնենք վայրկեան մը այն գեղեցիկ ու բեղուն շրջանը, որուն այսօր պսակման գագաթնակէտը կը գտնուինք: 1931 Յունուար 20 ամեռնային պաղօրերէն էր, երբ Գերպ. Հ. Գրիգոր Գովրիկեան Արքեպիսկոպոսը, տիտղոսաւոր Մծբնայ, 22ամեայ երկար ու ծանր վարչութեանէ ետք — մեծպատերազմեան սարսափներուն մէջէն վարած էր իր սիրական Հաստատութիւնը — կը մեկնէր մեզմէ անդարձ: Նոյն տարին Յուլիս 9ին Ուխտիս Աբբայութեան ծանր պաշտօնին կը կոչուէր Գերպ. Հ. Մեսրոպ Վ. Հապոզեան Վանական Ընդհանուր Ժողովով: Այդ ընտրութիւնը արտայայտութիւն էր այն սիրոյն ու գնահատանքին, որուն առարկան էր Նորընտիր Աբբահայրը իւր միաբանակիցներու շրջանակին մէջ: Բոլոր զինքը նանչցողները նոյն օրը գերագոյն բերկրանքը ապրեցան, վասն զի այդ ընտրութեամբ նախախնամութեան կողմէ վաւերացուած գտան իրենց Միաբանութեանս հանդէպ տածած զգածումներուն եւ իղձերուն ամբողջութիւնը: Փորձառու եւ հմուտ Աբբահայրը շուտով կու տար փաստերը թէ պիտի իրականցնէր ամէն ակնկալութիւն: Չեռնարկութիւններու եւ յաջողութիւններու շարք մըն են Նորօծեալի վարչութեան նախորդ տարիները: Անոր գործունէութիւնը մշակութային-դաստիարակչական ասպարէզի վրայ զարմանալի արագութեամբ պտղաբերեց. Գահիրէ եւ Բէյրութ բացուեցան գոյգ վարժարաններ. Պլովդիւի վարժարանը ստացաւ սեպհական շէնք: Միաբանութեանս միւս կայեանները օժտուեցան տնտեսական հաստատուն կռուաններով: Կրթական եւ գիտական գետնի վրայ նոր զարկ մը ստացաւ Միաբանութեանս գործունէութիւնը. այդ արդիւնքն էր իւր նորընտիր եռանդուն Աբբահօր լայն ու խոր տեսողութեան, բուն հետաքրքրութեան եւ անձնական հրապոյրին: Ան իւր բոլոր ուժերը ի սպաս դրաւ իւր գաղափարականին՝ ամէն կերպ բարձրացնելու իւր սիրական Հաստատութեան մակարդակը: Այդ նպատակով իւր բազմապատիկ զբաղումներուն վրայ յանձն առած էր նաեւ բարձրագոյն դասեր աւանդել Միաբանութեանս կղերականցին մէջ, որ իրեն մասնաւոր խնամքին առարկան է: Այն լայն յաջողութիւնը, որ ընկերացաւ միշտ մեր նորընտիր Աբբահօր ամէն ձեռնարկին՝ նշան էր թէ Աստուծոյ ձեռքը կար իւր օրհնութեամբ անոր ամէն գործերուն ու ծրագիրներուն մէջ: Այսօր աւելի քան երբեք կը զգանք այդ Չեռֆին հովանաւորութիւնը մարդկութեան այս ծանր ու տագնապալից օրերուն, երբ պատմութիւնը իւր երկաթէ սրունքներուն վրայ յամրօրէն կը յառաջանայ իր ետին թողած՝ կմախացած դաշտեր, քաղաքներ՝ աւեր աւերակ, — կարծես նոր պատմութիւնը աւեր միայն ըլլար: Այս տեսարանին առաջ Միաբանութիւնս աղօթքի պաշտամունքով կ'ուղղէ իւր

մրմունջները դէպի Բարձրեալը, մրմունջներ, որոնք երախտագիտութեան խունկն ունին այն հնամակալ Չեռֆին հանդէպ՝ փոխան անթիւ անհամար շնորհներուն, որոնց մեծագոյնն էր նորօծեալ Առաջնորդիս աբբայընտրութիւնը:

Աբբահօր արժանիքներուն ու վաստակներուն գնահատման մէջ մենք չէինք սխալած եւ ի՞նչպէս սխալէինք, երբ անոնք թիւով ու քանակով շատ ու բազմապիսի էին: Մեր գնահատումը ստացաւ իւր վաւերացումը բարձրագոյն եկեղեցական վայրէն՝ 9 Մայիս 1942 կոնդակով, որով Միաբանութեանս Աբբահայրը Գերպ. Հ. Մ. Վ. Հապոզեան տիտղոսաւոր Արքեպիսկոպոս կամախօս կը հռչակուէր: Սուրբ Գահը այս նոր պատուաշնորհը կը հիմնէր վեր հանելով նորընտիր Արքեպիսկոպոսին արժանիքները Միաբանութեանս զարգացման եւ կրօնի ծաւալման ի նպաստ: Յունիս 4ին կը հրատարակուէր պաշտօնապէս նոր Արքեպիսկոպոսին անուանումը Հռոմայ մէջ:

Եթէ հարկ եղաւ երկար սպասել մինչեւ օծումը՝ այդ պայմանաւորուած էր ներկայ քաղաքական հանգամանքներէ եւ Ս. Գահին, ինչպէս նաեւ նորընտիր Արքեպիսկոպոսին եւ Միաբանութեանս ջերմ բաղձանքէն: Ամէնուն ջերմօրէն բաղձանքն էր, որ օծումը կատարուէր հայ ծէսով. եւ այդ նպատակով սպասեցինք՝ ակնկալելով որ Արտասահմանէն պիտի գար հայ եպիսկոպոս մը՝ Գերպ. Սարգիս Արք. Տէր Աբբահամեան, բայց պատերազմի պայմանները անկարելի ըրին մեր բաղձանքին իրականացումը: Ասոր փոխան հանդիսաւոր օծումը կատարեց քաղաքիս Ծիրանաւորը Dr. Theodor Innitzer առնթերակայութեամբ Dr. Franz Kamprath եւ Dr. Ernst Seydl եպիսկոպոսներու:

Սեպտ. 13 տօն էր Միաբանութեանս եկեղեցոյն համար մասնաւորապէս, որ ծաղիկներու եւ բոյրերու մէջ կը շողար: Նախն մէջ տեղ գրաւած էին եկեղեցական ներկայացուցիչները, տեղույս հայ գաղութը, Միաբանութեանս բարեկամները: Եկեղեցոյ երգչախումբը, դեկավարութեամբ Հ. Մովսէս Վ. Սրապեանի, ընկերակցութեամբ նուագախումբի՝ կրօնական-գեղարուեստական հմայքը տուին օժման արարողութեան գեղեցիկ ժամերուն, որոնք նուագով ու լոյսերով՝ անժամանակ ապրումներու վերածուեցան հոգիներու մէջ: Նորօծեալ Արքեպիսկոպոսը իւր անդրանիկ օրհնութեամբ փակեց արարողութիւնը:

Հանդիսագիրները թափօրով եկեղեցոյ գլխաւոր մուտքէն Մայր Վանք առաջնորդեցին նորօծեալ Արքեպիսկոպոսը, ուր արարողութեան մասնակից ժողովուրդը փութաց իւր շնորհաւորութիւնները յայտնել: Երեկոյեան ժամերն յատկացուած էին Հայ Գաղութին, որուն անունով արժանապատիւ Տէր Եղիշէ Իւթիւնեան, տեղույս Հովիւր, իւր շնորհաւորական ուղերձն ըրաւ վեր հանելով օրուան նշանակութիւնը: Խօսք առին Պր. Գեղամ Ամատունի եւ Պր. Արաաշէս Յարութիւնեան, եւ առիթ առնելով օրն ու

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻ 7-12

ՅՈՒԼԻՍ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՁԸ ՏԱՐԻ 1942

Հ Ո Ս Տ Ն Ս ՈՒ Ր Բ Գ Ր Գ Ի Մ Է Ջ

(Շարունակութիւն:)

Գ Լ Ո Ւ Ս Գ

Ա Ս Գ Ա Ն Ա Ջ

§ 1. Ա Ս Գ Ա Ն Ա Ջ - Ա Շ Բ Ե Ն Ա Ջ - Ա Շ Գ ՈՒ Ջ Ա Յ Ի - (Կ Ա Ս Ի Շ Բ ՈՒ Ջ Ա Յ Ի -) Ս Կ Ի Թ Ա Յ Ի Բ

Հիւսիսէն Բարեւոյնին սպառնացող երրորդ թշնամին կ'անուանէ Երեմիա Ասեմազ, երբ. **אֶשְׂמָז** (*aškamaz*), Եօթան. *Aschamaz*, վուլգ. *Ascenez*, որ ազգահամարին¹ մէջ երբեւ Գոմերի առաջին որդի կը յիշատակուի: Այն անձուկ աղերսէն, զոր կը տեսնենք մէկ կողմանէ Հերոդոտոսի քով կը տեսնենք մէկ կողմանէ Հերոդոտոսի, միւս կիմերացիներու եւ Սկիւթացիներու, միւս կողմանէ բեւեռագրերու մէջ *Gimirroi* եւ *Asgúzai* (կամ *Iškúzai*), Հին Կտակարանին մէջ Գոմերի եւ Աշքենացի միջեւ, կը հետեւի արդէն թէ Ասքանացի - Աշքենացի = Աշգուզայի (Իշքուզայի) = Սկիւթացիները: Շատ մը մասնագէտներու կարծիքով այս անունը «Աստուածաշունչի մէջ գրչազրական սխալով Աշքենացի (**אֶשְׂמָז**) փոխանակ **אֶשְׂמָז**»² եւ

¹ Եր. Ժ., 3. Ա. Մն. Ա., 6:
² Աշքենացի-Աշգուզայի ձևերու ստուգարանութեան մասին տ. Jos. Karst, Alarodiens, 64 յջ., E. Blochet, որուն համաձայն Երեմիայի զերբ երբ թէ բոլոր այտայեան ժողովուրդները Գոմերէն սերած կ'ընթացէ (ROC = Revue de l'Orient Chr., 28 [1931-1932], էջ 412), Աշքենացի նազ մասնիկը կը համարի այտայեան յոգնակի շինող ձևն, ինչպէս՝ Շաքանացի = Շաքա-նաս = Շաքա-նար = Շաքա-լար, եւ այն՝ վերջին ձևը իբր թիւրքերէնի յոգ. ձև, իսկ վերջին ձևը իբր թիւրքերէնի յոգ. ձև (անդ, էջ 203 յջ.): Գերու՝ հետ աղերսի մէջ կը գնէ (անդ, էջ 203 յջ.): Թէ որչափ յանդուզն է ընդհանրապէս ամբողջ տեսութիւնը տեսնել արդէն «Թորդոմ» գլխուն մէջ (տ. ՀԱ, 1935, 604 յջ.):
³ KAT³, էջ 101. Համա. նաեւ Sayce, The cun. inscr. of Van JRAS, N. S. 14 (1882), էջ 394. ATAO³, էջ 154. Knudtzon, Assyr. Gebete, II, 131 (113). Schmidtke, Die Japhetiten, էջ 39, ծնթ. 2. Prásek, Geschichte, I, 115: Այսպիսի գրչազրական սխալի մ'ենթադրութիւնը Dier կը համարի իբրեւ «ոչ այնչափ հաւանական» (Genesis, էջ 93). Համա. նաեւ

կ'ուզեն ն () ուի () փոխելով կարգաւ Աշքուզ, որմէ յունարէնին մէջ կրնար Տասմոզ ըլլալ: Իսկ ասորեստ. եւ երբ. լեզուներուն մէջ տեսնուած այս անունին յառաջադիր ձայնաւորը կը մեկնուի անով որ սեմական ժողովուրդները զժուարաւ կրնան բառակիրը կրկին բաղաձայն արտասանել: Այսպիսի յառաջադիր ձայնաւորներ կը գտնուին նաեւ ուրիշ անուններուն մէջ, ինչպէս՝ *Mórđon* - *Մարծու*, *Sargaroi* եւ *Asargatijá*, *Madai-Amadai*⁴ եւ: Schmidtke⁵ կ'ընդունի նաեւ այն հնարաւորութիւնը թէ դուշնունն ունի այն կերպը, որով կրնար այս անունը Սկիւթացիներուն քով իբր *škuuz* հնչումն ունեցած ըլլալ, որ Ասորեստանցիներու լեզուին մէջ անդայինի կորուստով Աշգուզայի եղած է, մինչ երբայցեղէնի մէջ անդայինի պարագան զբաւոր ալ արտայայտելու ջանքած են⁶: Հակառակ մասնագէտներու կողմանէ տրուած այս սրամիտ մեկնութեանց բոլորովին համոզիչ կարելի չէ համարել այս կարծիքն եւ Աշքենացի ն տարակուսի ենթարկել, որովհետեւ Տասմոզի կից կը գտնենք նաեւ *Տասմոզոս* կամ *Տասմոզոսի* ձևը⁷:
 720ի ատենները ն. Բ. հնդեւրոպական ժողովուրդներու զաղթական մեծ շարժումները կը զդրդեցնէին ամբողջ Յառաջադիր-մեան Արեւելքը, որոնց զլխաւոր ներկայա-

Hommel, EGAO, էջ 212: նաեւ Կարստի համաձայն Աշքենացի-Աշգուզայի երկու տարբեր ձևեր են (Alarodiens, 65):
⁴ Prásek, Geschichte, I, էջ 10. ծնթ. 2:
⁵ Die Japhetiten, էջ 39, ծնթ. 2:
⁶ Համա. նաեւ F. Hommel, Hethiter und Skythen und das erste Auftreten der Iranier in der Geschichte, Sitz.-Ber. d. böhm. Ges. d. W. Kl. f. Phil., Gesch. und Philologie, 1898, VI, 16. F. Hommel, EGAO, 212. Մարբուտարի համաձայն (Unters. zur Gesch. von Erân, Philologus, Suppl., X, 1905-1907, էջ 112) ասոր հիմնական ձևն է *skuca*. Սկիւթացուց մասին տ. H. Winckler, Kimmerier, Ašguzäer, Skythen, AOF, I, էջ 484 յջ., Prásek, Geschichte, I, էջ 141 յջ., KAT³, էջ 101 յջ., Streck, Assurbanipal, CCCLXXIV:
⁷ Համա. Xenophon, Anabasis, 4, 7, 18 եւ 4, 8, 1:

Գաղութիս հաւաքումը, որ գրեթէ լիաթիւ ներկայ էր, առաջարկուեցաւ հայկական նկար մը նուիրել: — Նորոծեալ Արքահօր ջերմ բաղանջներէն եղած է միշտ՝ ունենալ վանքին մէջ նշանաւոր հայ նկարիչներու գործերէն՝ նաեւ հայ արուեստով տպաւորելու համար ազգային քէ օտար այցելուները:

Այս առթիւ ու նպատակով ազգայիններէ հաւաքուած գումարով գնուեցաւ Գ. Բաշինջաղեանի կարեւորագոյն հսկայական մէկ գործը՝ «Սեւանայ Լիւնը», որ իր մեղմօրօր ջուրերովն ու մեղմագոյն երանգներովը՝ մարմնացած անդորրութիւնն է՝ տարրօրէն հակադրուած Հայուն ալեծուփ նակատագրին: Նկարիչ Պր. Անդրէ Սերուզին — Դարվիշ իր կողմէ նուիրեց իր գործերէն հայ գիւղական տեսարան մը՝ «Խոյերու կոիւր»: Համբուրգաբնակ Պր. Հայկ Թիւրքեան վանքին պարգեւեց վարդան Մախոխեանի մէկ ծովանկարը: Իսկ Պր. Արմենակ վարդեան, վիեճակ, այս առթիւ Միաբանութեան քանգարանին ընծայեց երկու հին կովկասեան կապերուներ — նախապէս նուիրած էր անատոլեան հին գորգ մը:

Պարտք կը համարինք այստեղ մեր ջերմագին շնորհակալութիւնը յայտնել մեր պարգեւատուներուն եւ բարեկամներուն, որոնք Գերայ. Արքահօր եպիսկոպոսական ձեռնադրութեան մեծ տօնը անիթ առին՝ վանքիս հանդէպ իրենց անկեղծ ու անձնուէր զգածումները արտայայտելու՝ ազգադէտ ընծաներով:

Կարն ժամանակ ետք՝ Հոկտ. 3ին նորոծեալ Արքեպիսկոպոսը կատարեց իր անդրանիկ Չայնաւոր Պատարագը եւ առաջին ֆանայական ձեռնադրութիւնը:

Գերայ. Արքահօր արքեպիսկոպոս անուանուելուն եւ օծուելուն առթիւ, հակառակ ժամանակի աննպաստ պայմաններուն՝ փութացին եկեղեցական մեծամեծ անձեր, ծանօթներ եւ բարեկամներ իրենց անկեղծ իզներն ներկայացնել նամակով քէ հեռագրով: Շնորհակալութեամբ անոնց ամէնուն կը ձայնակցին Միաբանութիւնս եւ Խմբագրութիւնս՝ մաղթելով իւր նորոծեալ Արքահօր երկար ու բեղուն տարիներ ի բարգաւաճումն Միաբանութեանս, յօգուտ Ազգիս եւ ի փառս Աստուծոյ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ»Ի

